

ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ.

Այս ամառ Թիֆլիսում տեղի ունեցաւ ուսուցչական միութեան տարեկան ընդհանուր ժողովը, ուր մի քանի կարեւոր հարցեր քննութեան առնուեցան: Արդէն մի քանի տարի է, ինչ գոյութիւն ունի այդ ընկերութիւնը, սակայն նա չի հասնում այն ծաղկեալ դրութեան, որը ցանկալի է: Հայ ուսուցչութիւնը ընդհանրապէս շատ սառն վերաբերմունք է ցոյց տալիս դէպի իր շահերի պաշտպանութեան համար կեանք առած այդ ընկերութիւնը: «Նոր Դպրոցն» անգամ, ընկերութեան միակ աչքի ընկնող կենդանի գործը, չի կարողանում համախմբման գործին նպաստել և ուսուցչական շրջաններում լայն ընդունելութիւն գտնել և նոյն իսկ նրա բաժանորդագրութիւնը քանի գնում այնքան պակասում է և այն էլ ուսուցչական շրջաններում: Սա շատ ցաւալի դրութիւն է, սակայն ցաւալի լինելով հանդերձ պարզում է շատ բան: Պէտք է երևոյթների պատճառներին մօտենալ, քննել պարզաբանել, որպէս զի այնուհետև հնարաւոր լինի հեշտութեամբ բարելաւման համար միջոցներ գտնել:

Առաջին հարցը, որը այժմ մեզ պէտք է հետաքրքրէ, ուսուցչական միութեան գոյութեան խնդիրն է. պէտք է այդպիսի մի ընկերութիւն գոյութիւն ունենայ, թէ նրա գոյութիւնը թիւրիմացութեան կամ տգիտութեան հետեւանք է: Հարցի պատասխանը կտանք ուղղակի և դրական մտքով. ուսուցչական միութիւնը մի այնպիսի ահարժեշտութիւն է, ինչպիսի անհրաժեշտութիւն է ներկայացնում հասարակական—սոցիալական որ և է մի գրուպպայի համախմբումը: 19-րդ և 20-րդ դարերը համախմբումների, ասօցիաների դարեր են. անհատական գործը, նախաձեռնութիւնը իւր հիմքերն է գտնում կազմակերպութիւնների մէջ: Նեղից պայքարը յատկապէս և առանձնապէս կազմակերպութեամբ մանր և մեծ խմբերի գործ է: Ոչ մի դարեշրջան այնքան բազմակերպ ու բազմազոյն խմբակցութիւններ չի

ունեցել, որքան մեր դարը: Եւրոպական երկրներում չկայ մի այնպիսի պրաֆեսիա, որի անդամները համախմբումներ չունենան և միասին չաշխատեն իրենց տնտեսական և հոգեկան կարիքների համար: Պաշտօնակիցները ոչ միայն միացած են իրար հետ շահերի, տնտեսականի նոյնութեամբ, այլ և հոգեկան կազմով իրար աւելի մօտ են. նրանց հետաքրքրութիւնը, զգացումները, մտքի գործունէութեան ընթացքը, վարք ու բարքերը, նոյն իսկ տեմպերամենտները աւելի մօտ, իրար հասկանալի և իրար հետ մերուող են, քան տարբեր պաշտօններ ունեցող անհատների հոգեկան նոյն յատկութիւնները: Վերջին դարու տնտեսական սուր պայքարները, հասարակական դասերի ուժեղ և պարզ ստորաբաժանումները և իրար վերաբերմամբ պարզ շերտաւորուելը աւելի և աւելի մօտեցրեց զբաղումներով իրար մօտ անհատներին: Ուսուցչութիւնը պաշտօն է, բոլոր այդ պաշտօնով զբաղւողները կազմում են տնտեսական և հոգեկան շահերով իրար հետ շաղկապուած մի միութիւն. և ահա այդ բնական ներդաշնակութեան պատճառով է, որ այժմ եւրոպական կուլտուրական երկրների ուսուցչութիւնները կազմում են սերտ իրար հետ միացած մասսաներ, որոնք իրենց շահերի, իրենց մտաւորի բարձացման, հասարակական արժէքի և զիրքի համար այնպիսի երկար կռիւներ են մղում, որը նախանձ պատճառել կարող է նոյն իսկ մեր երկրի քաղաքական կազմակերպութիւններին: Գերմանիայի ուսուցչական միութեան անդամների թիւը հարիւր հազարից անցնում է. այդ հսկայական կազմակերպութիւնը զպրօցական-ուսուցչական մի հարց չկայ, որի մասին իր կարծիքը, իր վերաբերմունքը չունենայ և չաշխատէ իր կարծիքները անցկացնել կեանքի մէջ օրէնսդրական կամ այլ ճանապարհներով: Մէկ անգամ այդ ընկերութիւնը աշխատում է մանկավարժական մի որ և է նոր երևոյթ, մեթոդ տարածել ուսուցչութեան մէջ, մի այլ անգամ նա աշխատում է օրէնսդրութեան միջոցաւ զպրօցը ազատել իր կարծիքով փաստակար օրգանների ազդեցութիւնից, մի այլ անգամ աշխատում է զանազան ման-

կազմարժական-հոգեբանական աշխատանքներին, զրադա-
րաններին հիմնարկութեամբ ուսուցչութեան մէջ ինքնագոր-
ծութեան և ինքնազարգացման ոգին զարգացնել: Մի խօս-
քով մի մեծ, պատկառելի կազմակերպութիւն, որը միաց-
նում է զանազան քաղաքական դաւանանքի պատկանող ու-
սուցիչներին որոշ ընդհանուր ընդունելի խնդիրների շուրջը,
և ամեն ուր է, ուր կայ ուսուցչութեան շահի և յառաջա-
դիմութեան խնդիր: Ներկայ սոցեալական դարում այդպիսի
միութիւնը մի անհրաժեշտութիւն է ամեն մի գիտակից
անհատ-պաշտօնեայի համար:

Եթէ ուսուցչական միութիւն ասուած բանը մի այդ-
պիսի մեծ կարիք է, հապա ինչո՞ւ նա չի կարողանում լայն
արմատներ բռնել մեր կեանքում: Ինչո՞ւ նա այնքան կաղէ
կաղ է քայլում իր գոյութեան հէնց սկզբի օրերից: Պէտք է
այժմ մօտենալ պատճառների քննութեան:

Ամեն մի ժողովուրդ պատմական զանազան պայման-
ների շնորհիւ ապրելու որոշ ձևերի է վարժուում: ստեղծում
է իր ուրոյն բարքերը, բնաւորութեան գծերը, իդէալներ և
այլն: Թւում է, թէ մեր ժողովրդի մէջ աճել է առանձնացման
բնազդը: Համախմբական մեծ գործերով և ձգտումներով մեր
ժողովուրդը այժմ յատկապէս հպարտանալու առանձին
առիթներ չունի: Այս երևոյթը նկատուում է նրա վաճա-
ռականութեան, հասարակական գործերի, դպրոցների և
եկեղեցական կազմակերպութիւնների մէջ: Ամեն տեղ նոյն
կետրօնախոյս բնաւորութիւնը. համայնական ընդհանուր
գործի շուրջը համախմբուելու ընդունակութեան բացա-
կայութիւնը: Մեր ժողովուրդը դեռ շատ քիչ է դաստիա-
րակուած սոցիալական կեանքի, համայնական աշխատանքի
համար: Մեր ժողովրդի մէջ աչքի է ընկնում նաև կազմա-
կերպչական տաղանդի բացակայութիւնը, մի յատկութիւն,
որը կարծեմ խորթ է նաև մեր պատմական անցեալին.
ինձ գոնէ այնպէս է թւում, որ մեր բոլոր կազմակերպու-
թիւնների մէջ դեռ չի երևացել և չի երևում կազմա-
կերպչական ընդունակութեան բացայայտ փաստեր, ամեն
տեղ նոյն թուլութիւնը, անկարողութիւնը և շուտափոյթ

մահուան դատապարտուած լինելու առանձնայատկութիւնը: Մի միութեան յաջողութեան մեծագոյն զբաւականն է, որ ժողովուրդն ունենայ կազմակերպելու կարողութիւն և հասարակական հասունացած բնազդ և դատարարականութիւն: Մեր ժողովուրդը այն երկու մեծ յատկութիւններով առանձնապէս չի կարող հպարտանալ, ուստի և նրա մէջ զոյութիւն ունեցող խմբակցութիւնները պարարտ հող չունին լիակատար զարգանալու. նրանք հէնց իրենց զոյութեան սկզբից զրուած են աննպաստ պայմանների մէջ: Նոյն վիճակի մէջ է նաև ուսուցչական միութիւնը. դժուար է ապացուցել, թէ մեր ուսուցիչները հասարակական համախմբական ցանկութիւնների առանձին բարեկամ լինին, այն ինչ հակառակը պնդելը հաւանականութեանը աւելի մօտ է և շատ-շատերի կարծիքներին համապատասխան: Ահա թէ ինչ մեծ ցաւի դէմ պէտք է կռուէ միութիւնը, մի ցաւ, որը լիակատար զարմանելու համար մի քանի սերունդների աշխատանք է հարկաւոր: Ինձ թւում է, որ այս մեծ պակասութիւնը առիթ է դառնալու, որ միութիւնը դեռ երկար ժամանակ լաւ կազմակերպութիւն ունենալու դժուարութեան զիտակցութիւնն ունենայ: —

Բացի այդ կան նաև մի քանի աննպաստ հանգամանքներ, որոնք առիթ են դառնում միութեան անբարեյաջող զարգացման: Ռուսական յեղափոխութիւնից յետոյ հասարակութիւնը ապրում է մի անասելի անտարբերութեան մէջ, տիրում է հասարակական լայն խաւերի վրայ թմրութիւն, անտարբերութիւն. հասարակութիւնը իդէալազուրկ է այժմ. համախմբական մեծ լարումներից յետոյ քայքայուել է կենդանացնող ուժը, ամեն ինչ ցրիւ է եկել. ամեն մէկը իր անհատական կեանքովն է ապրում. յուսախաբութիւնից յետոյ երիտասարդութիւնը իրեն զգայական կեանքին է յանձնել. մի զրութիւնը, որը բնականօրէն յաջորդում է հասարակական մեծ և ուժեղ սպառող շարժումներին: Եւ ահա այսպիսի հոգեկան զրութեան մէջ ապրող հասարակութեան մէջ կազմակերպուելու, զլուխ բարձրացնելու ցանկութիւն են ունենում աւելի մութ տարրերը և ոչ

ուսուցչական միութիւնները: Կարո՞ղ ենք պնդել, թէ մեր հասարակութեան լաւագոյն տարրերը այժմ չեն գտնուում այն դրութեան մէջ, որը յատուկ է այժմ՝ ռուսական հասարակութեան: Այսպիսի հոգեկանի տէր հասարակութեան մէջ շատ դժուար է կազմակերպել ընկերութիւն և ծաղկման վիճակի հասցնել նրան:

Մի այլ հանգամանք ևս դժուարացնում է ընկերութեան յաջող զարգացումը: Ընկերութեան ամեն մի ձեռնարկութեան համար պէտք է քաղաքական իշխանութիւնից թոյլտուութիւն խնդրել՝ շատ անգամ դժուար է լինում իրաւունք առնել: Երբեմն հեռաւորութեան պատճառով ուշացւում է պատասխանը: Զուտ մտերմական յաճախակի խմբակցութիւններ կատարելը նոյնպէս անյարմար է ներկայ պայմաններում: Սրանք այնպիսի հանգամանքներ են, որոնք որոշ չափի դժուարացնում են ճիւղերի յարմար գործունէութիւնը: Սրպէս զի մի ընկերութիւն ծաղկել կարողանայ, անհրաժեշտ է, որ նա գործունէութիւնը լիակատար ազատութիւն ունենայ: Առանց այն էլ ասարակութիւնը ապրում է անտարբեր դրութեան մէջ, երբ որոշ անյարմարութիւններ էլ գալիս են գործը դժուարացնելու, այն ժամանակ նրա ակտիւ գործունէութիւնը ընկերական կեանքի համար աւելի ևս թուլանում է:

Մեր ուսուցչութիւնը առայժմ կազմուած է երիտասարդութիւնից, նոր սերնդից: Կար մի ժամանակ, երբ մեր ուսուցչութեանը ոգևորում էր ընդհանուր իդէաներ՝ և խոր կերպով հասարակական կեանքը բարեփոխելու ցանկութիւն ունէր, նա ապրում էր ուժեղ և շրջապատի համար զայլի արտայայտութիւններով: Այն ժամանակ մի գործի լաւը զիտակցելը և այլ իտակցածին կեանք տալը զոհողութիւններով հանդերձ, առանց անձնական շահը ի նկատի առնելու, մի ընդհանուր երեւոյթ էր: Մեր ներկայի երիտասարդութեան հոգեբանութիւնը այժմ հետաքրքրութեան այլ նիւթերից է կազմուած. չկայ ուժեղ, զգալի ապրումներ ի ապացոյցներն մեծ իդէաներից զուրկ վիճակ, լալկան, գանգատաւոր դրութիւն: Անհատը այժմ ցանկանում է

Հոգեկան և մատերեալ բարիքները ճաշակել լիակատար, անգիշում չափերով: Անհատականին անմիջօրէն չբաւարարող գործեր այժմ քիչ, և այն էլ շատ քիչ են կատարուում: ամեն տեղ արժէքների մասշտաբներից մէկն է, թէ անհատը որքան է մասնակից որ և է դրական գործի բարիքներին: Ներկայում այդ զիտակցում են բոլոր ընկերութիւնները և աշխատում են որ և է կերպ ուէալ օգուտը մեծացնել, որպէս զի ընկերութեան արարքները զգալի լինին բոլորին և որ ամենազլխաւորն է շօշափելի: Հայ ուսուցիչներից շատերից դանդաւտ եմ լսել թէ ուսուցչական միութիւնը օգուտ չի տալիս իր անդամներին ծրագրի խոստումների մի ամենաչնչին մասն անդամ չի իրագործում, որպէս զի ուսուցիչները կապուին ընկերութեան հետ: Ճիշտ որ ընկերութեան գործունէութեան այդ մասը զգալի կերպով կաղում է. մինչև այժմ ընկերութիւնը դեռ չի կարողացել մի զգալի գործով ուսուցչութեան այդպիսի դանդաւտներին վերջ տալ, թէև իմ անհատական խորն համոզումն է, որ հէնց «նոր-Գարոցի» գոյութիւնը բաւական է, որ մեր ուսուցիչները կապուին ընկերութեան հետ: Ներկայ պայմաններում այդ գործն էլ շատ մեծ բան է, և վերջապէս մեր ուսուցիչները պէտք է զիտակցեն, որ մի ընկերութիւն միմիայն տասնեակ տարիների ընթացքում կարող է իր ծրագրի մէկ տասերորդ մասը իրագործել, իսկ հայ իրականութեան մէջ եղող ընկերութիւնները ունին իրենց գործունէութեան առանձին դժուարութիւնները: Ինչպէս երևում է, ընկերութեան կենտրոնը զգացել է այդ պակասը և վերջերս փորձեր է անում ուսուցիչների այդ դանդաւտներին մասամբ վերջ տալու:

Ուսուցչական միութեան անյաջողութեան զխաւոր պատճառներից մէկն էլ հէնց ինքը մեր հայ ուսուցչութիւնն է. ինչպէս նաև նրա անհաստատ դուրսութիւնը: Մեր ուսուցիչները շատ են անհետաքրքիր որքան ես նկատել և տեղեակ անհատներից իմացել եմ, մեր ուսուցչութիւնը քիչ է կարգում, յառաջագիմելու մեծ ցանկութիւններ չի ցոյց տալիս: Մի քանի տարի պաշտօնավարելուց յետոյ.

կամաց-կամաց նա սկսում է յետադիմել և մօտենալ հասարակ ժողովրդի հոգեկան մակերևոյթին։ Սա մի շատ ցաւալի երևոյթ է, որովհետեւ չհետաքրքրող, չկարգացող ուսուցչութիւնը չի կարող կանոնաւոր միութիւն ծնել իր միջից։ Ամեն մի ընկերութեան զոյուութեան հիմքն է կազմում միութիւնը կազմող անհատների հոգեկան շարժունութիւնը, չկայ այդ ուրեմն թոյլ է լինելու այդ համախմբութեան գործունէութիւնը։ Մեծապէս վնասում է գործին նաեւ մեր ուսուցիչների թափառական վիճակը՝ որպէս զի մի ճիւղ կանոնաւոր գործունէութիւն ցոյց տայ, պէտք է նրա անդամների գոնէ մի մասը րկար տարիներ միեւնոյն տեղը մնան, որպէս զի ընկերութեան մէջ որոշ աւանդութիւններ, գործունէութեան որոշ ձևեր ստեղծուեն։ Գործերը պէտք է ժամանակի մէջ հասունանան։ Այդպէս չէ զրութիւնը սակայն մեր մէջ. ուսուցիչները մշտապէս թափառման մէջ են. երկու-երեք տարի միեւնոյն տեղում պաշտօնավարելը կարծէք մի բացառիկ երևոյթ է. ոչ ոք մի տեղի հետ հաստատ կպած չէ, որպէս զի տեղական ճիւղի համար ուժեղ կերպով աշխատէ։ Մնայուն լինելու դիտակցութիւնը զրաւական է ձեռքի գործին գեղեցիկ կերպարանք տալու համար։ Միւս տարի մի այլ տեղ պաշտօնավարելու դիտակցութիւնը ոչնչացնում է տեղական աշխատանք կատարելու ցանկութիւնը, մի հանգամանք, որը իր ազդեցութիւնը պէտք է դեռ երկար ժամանակ զգալի դարձնէ միութեան գործունէութեան ընթացքում։

Ուսուցչութեան քչութիւնն էլ միւս կողմից որոշ դէպքերում առիթ է դառնում միութեան ճիւղաւորման խափանմանը։ Ըստ կանոնադրութեան պահանջւում է առնուազն 15 անդամ։ Սա մեր պայմանների համար մեծ թիւ է, շատ դժուար է լինում որոշ տեղեր այդքան ուսուցիչներ իրար անել՝ վերցրէք որ եւէ գաւառական մի շրջան և պարզօրէն կհամոզուէք, որ վերին պնդումը ճիշտ է։ Գիւղերը իրարից հեռու, ամեն մի տեղ մի կամ երկու ուսուցիչ է լինում։ Այս պայմաններում առնուազ թիւը

պէտք է նոյն իսկ 7-ի իջեցնել: Եթէ հնարաւոր է, կարելի է նաեւ տարեկան անդամութեան վարձը երեք ռուբլուց մէկ և կէսի իջեցնել և այդ համեմատութեամբ «Նոր-Գարոցի» բաժանորդագրութիւնը մի փոքր բարձրացնել: Թուերի այս իջեցման մասին հարկաւոր է շուտով մտածել. պէտք է փորձել այդ նոր պայմաններով ևս, դուցէ այսպէս միութիւնը մի փոքր աւելի մեծ յաջողութիւն ունենայ:

Մինչև այժմ նկարագրում էինք այն պատճառները, որոնք աւելի ընդհանուր գոյն ունին և չէին վերաբերում միութեան գաւառական կամ կենդրոնական ճիւղերի գործունէութիւնը, այդ մասին կցանկայինք մի քանի զիտողութիւններ ևս անել: Գաւառական ճիւղերը կենդանութեան ոչ մի նշան չեն ցոյց տալիս, բացի այն, որ նրանք անուանապէս քաշ են տալիս իրենց գոյութիւնը: Ուրեմն միութեան ազդեցութիւնը և նշանակութիւնը գաւառում միանգամայն փոքրիկ մեծութեան է հաւասար: Այլ է կենդրոնը, նա երբեմն-երբեմն կենդանի գործ էլ է ցոյց տալիս հանդէսների կազմակերպութեամբ, կամ զրադարան և արձան հիմնելու նպատակներով և մանաւանդ իր «Նոր Գարոցով»: Գուցէ աւելին ներկայ պայմաններում անհնար է սպասել կենդրոնական կազմակերպութիւնից, մանաւանդ որ զրամական միջոցներ չունի կենդրոնը, սակայն մի բան կենդրոնը պէտք է չմոռանայ, այն է կենդանի կապ հաստատել իր և գաւառական ճիւղերի մէջ. շրջիկ դասախօսներ, կազմակերպողներ, զրաւոր հաղորդակցութիւն մասերի հետ աւելի սերտ և արագ պէտք է լինի, քան եղել է մինչև այժմ: Առ այժմ զրգիւնները պէտք է կենդրոնից դան դէպի ճիւղերը, դուցէ այս մեթոդն էլ ֆիասիօ կրէ, սակայն այդ էլ պէտք է փորձել համոզուելու համար, որ միջոցները սպառուած են գաւառական ճիւղերին կենդանութիւն տալու համար:

Մինչև այժմ թուեցինք ուսուցչական միութեան թոյլ գործունէութեան պատճառները, դրանցից ոմանք հիմնական էին, ոմանք երկրորդական, ոմանց վերացնելու համար հարկաւոր է շատ երկար ժամանակ, ոմանց կարելի է մօտիկ

ապագայում ուղղել: Մեր կարծիքով սակայն ընկերութիւնը դեռ երկար ժամանակ կադէ կադ պէտք է շարունակէ իր գոյութիւնը, որովհետեւ նա կանգնած է այնպիսի արգելքների առաջ, որոնց վերացնելն իր ձեռքին չէ. որպէս զի նա ծաղկի, պէտք է մեր ժողովրդի սոցիալական բնազդները աւելի կրթուին, պետական-հասարակական կեանքը այլ բարեփոխութիւնների մէջ մտնեն, ուսուցչութիւնը իրեն կպած պէտք է զգայ իր պաշտօնից. և այլ հանդամանքներ, որոնց վերացումը կախուած է ոչ թէ միութեան գործիչների ցանկութիւններից, այլ ամբողջ հասարակական կեանքի փոփոխութիւնից: Հասարակական կեանքի կենսունակութիւնն է միայն վերածնել և միութիւնը, իսկ որքան մեր կեանքը ներկայի նման մնայ, այնքան միութիւնը ներկայ տարտամ դրութեան մէջ է մնալու: Դրեալ թէ մօտիկ ապագայում դրութիւնը շատ փոխուի, ներկայի գործունէութեան հիմքը պէտք է լինի մի կերպ պահպանել միութեան գոյութիւնը մինչև բարեյաջող պայմանների դալը: Թշուառ, անգոյն գոյութիւնը աւելի լաւ է, քան միութեան ոչնչանալը: Երկար տարիները միշտ ընկերութիւններին աւելի են խորը տպաւորում հասարակութեան գիտակցութեան մէջ և մշակում գործունէութեան լաւագոյն եղանակներ:

Մեր ուսուցիչները պէտք է վերջապէս զգան, որ իրենց շահերին նուիրուած մի ընկերութիւն պէտք է իրենց կողմից պաշտպանութիւն գտնի. մինչև այժմ նրանց վերաբերմունքը շատ ցաւալի է եղել և ոչ արժանի իր սրահների առանձնութիւնը զգացող մարդոց: Թէ ովքեր են ճիւղերի կամ կենդրոնի վարիչները, հաճելի թէ տհաճ անհատներ, կարող, թէ անկարող, երկրորդական խնդիրներ է առ այժմ, այդ բոլորը անցաւոր են, սակայն մնայուն պէտք է լինի իդէան. շահակից ուսուցչութեան միութեան դադափարը, որը ամեն մի ուսուցչի սրտում զգացումներ և գործունէութիւն պէտք է արթնացնէ:

Այս տարուայ ընդհանուր ժողովը մի շատ զեզեցիկ որոշում է արել. եկող տարուանից «Նոր-Դպրոցը» պէտք է ամսական հրատարակութիւն դառնայ: Հէնց որ «Նոր-Դպրոցը» շաբաթաթերթ (թէև հրատարակուած էր երկշաբաթաթերթ) դարձաւ, «Արարատում» մի փորձիկ գրութեամբ այն կարծիքը յայտնեցի, թէ այդ որոշումը չի կարելի յառաջադիմութիւն համարել, որովհետև մեր գպրոցական կեանքը այնպիսի զարգացման չի հասել, որ նրա մէջ յառաջացող խնդիրները անպայման մի շաբաթուայ մէջ հասարակութեան քննուած յայտնուին: Նոյնպէս առարկել էի, որ այդ ձևով անհնար կլինի զիտական լուրջ յօդուածներ տալ հայ ուսուցչութեան, որը սակայն հէնց այդպիսի յօդուածների կարիքն ունի:

Փորձը ցոյց տուեց, որ մեր առարկութիւնները ճիշտ էին. «Նոր-Դպրոցը» դարձաւ շաբաթաթերթ, սակայն նա իր էութեամբ, իր յօդուածներով մնաց ամսագիր և կատարեց այդ պաշտօնը շատ անկատար: Նա ոչ տեմպերամենտի թերթ էր և ոչ էլ զիտութեան օրգան, այլ մի անյաջող և անդոյն խառնուրդ: Վերջապէս եկող տարուանից նա դուրս կգայ այդ խառնուրդային վիճակից և կմօտենայ իր բուն և իսկական կոչմանը:

Գ. Էդիլեան